

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (83)

2019 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո ռ ի ռ ու ռ դ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.

Գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան - ի.գ.թ

Գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Ղավիթ Ավետիսյան - ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.

Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.

Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է

հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների

տեսակետների:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am

Դասիչ՝ 77771

Տպագրական 13.5 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

24.03.2019

Հանձնված է տպագրության

15.04.2019

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ъ Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (83)
2019 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Р е д а к ц и о н н ы й с о в е т

Самвел Дилбандян - д.ю.н.

зам. главного редактора

Карен Геворгян - к.ю.н.

зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Ваге Оганнесян - д.ю.н.

Тарон Симонян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: [http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

13.5 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 24.03.2019
Подписано к печати 15.04.2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրական իրավունք

Անահիտ Մանայան

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ԻՐԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵԿՈՐԱԳՈՒՅՆ ԵՐԱՇՆԻՔ..... 5

Рита Арустамян

ПРОБЛЕМА ГАРМОНИИ ВЗАИМООТНОШЕНИЙ ЛИЧНОСТИ, ОБЩЕСТВА И ГОСУДАРСТВА..... 11

Մուշեղ Բաբայան

ՄԱՍՆԱԿՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՈՆՄԵՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ 18

Հայկ Կեսոյան

ՊԱՌԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԶԵՎԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ 28

Պետության և իրավունքի տեսություն

Taron Simonyan

THE EVOLUTION OF THE PRINCIPLE OF SELF-DETERMINATION AND THE ICJ ADVISORY OPINION ON THE DECLARATION OF INDEPENDENCE OF KOSOVO.. 35

Քրեական իրավունք և դատավարություն

Արսեն Մարտիրոսյան

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ (ՔՐԵԱԿԱՆՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ) ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՐՎՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ 44

Միսակ Մարկոսյան

ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՐԱՇԱՀԵԼՈՒ ԵՎ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱԶՄԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ 51

Արտակ Ղազարյան

ՄԱՍՆԱԿՈՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՄՈՐԵԼՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 65

Քաղաքացիական իրավունք և դատավարություն

Հասմիկ Ենգոյան, Րաֆֆի Նալչաջյան

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ԲՈՂՈՔԸ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՎՈՂՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՆԵՆԴԻՐՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՈՒՈՐՏՈՒՄ..... 75

Սիրո Ամիրխանյան	
ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՈՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ	82
Անի Մուրաֆյան	
ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԿԵՂԾ ԵՎ ՇԻՆԾՈՒ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՆՎԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	90

Միջազգային իրավունք

Эдгар Мейроян	
ДОКТРИНА АБСОЛЮТНОГО ТЕРРИТОРИАЛЬНОГО СУВЕРЕНИТЕТА В ПРАВЕ ТРАНСГРАНИЧНЫХ ВОДНЫХ РЕСУРСОВ	97

Իրավաբանական գրագրություն

Յուրի Ավետիսյան, Արսեն Մկրտչյան, Լիանա Սարգսյան	
ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԼԵՁՈՒՆ. ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	104

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ԲՈՂՈՔԸ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՈՒՈՐՏՈՒՄ

Հասմիկ Ենգոյան

*իրավաբանական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ*

Րաֆֆի Նալչաջյան

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
իրավագիտության ամբիոնի ասպիրանտ*

Ինչպես հայտնի է, պետական գնումների ոլորտի նկատմամբ ֆինանսական վերահսկողությունը իրավասու պետական մարմինների իրավական նորմերով կանոնակարգված գործունեություն է՝ ուղղված ֆինանսական պլանավորման ճշգրիտ լինելուն, դրամական միջոցների օգտագործման հիմնավորվածության, ճշտության և արդյունավետության ստուգմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պետական գնումների ոլորտի նկատմամբ ֆինանսական վերահսկողություն իրականացնելու գործառնություն էն օժտված ՀՀ ֆինանսների նախարարությունը և գնումների հետ կապված բողոքը քննող անձը¹:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքներն ուսումնասիրում է պատշաճ մանրամասնությամբ ու անաչառորեն և սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ է գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր է ղեկավարվել բացառապես գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սույն օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ կարող է նշանակվել² Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որն ունի տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենտ) կամ իրավագիտություն մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, պետական կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն յոթ տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և տիրապետում է հայերենին:

Գնումների հետ կապված բողոքը քննող անձը պետական գնումների ոլորտի նկատմամբ ֆինանսական վերահսկողություն իրականացնում է պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ

¹ «Գնումների մասին» ՀՀ օրենքում 23.03.18 թ. կատարված փոփոխությամբ «ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդ»-ը վերանվանվեց «գնումների հետ կապված բողոքը քննող անձ»-ի:

² 18.03.2019 թ. դրությամբ գործում է գնումների հետ կապված բողոքը քննող երկու անձ:

բերված բողոքներ քննելու միջոցով, որոնք կարող են ներկայացնել յուրաքանչյուր անձի կողմից¹: Նա նախ և առաջ պետք է վերահսկի, որ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները համապատասխանեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և սկզբունքներին:

Ինչպես հայտնի է, «Գնումների մասին» ՀՀ օրենքի նպատակն է գնումների գործընթացում ապահովել հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ,

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում,

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում,

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Այսպիսով, գնումների ոլորտի նկատմամբ ֆինանսական վերահսկողություն իրականացնելիս գնումների հետ կապված բողոքը քննող անձը պետք է նախ և առաջ վերահսկի, որ պետական գնման շնորհիվ պատվիրատուն ձեռք բերի իր կարիքին համապատասխան ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ, ընդ որում ձեռքբերումը լինի համարժեք հատուցմամբ: Բացի այդ, պետք է նաև վերահսկվի, որ գնումները լինեն տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այդ նպատակներին հասնելու համար «Գնումների մասին» ՀՀ օրենքով յուրաքանչյուր անձի վերապահված է իրավունք մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը բողոքարկել գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները:

Նմանատիպ բողոքներ քննելիս գնումների հետ կապված բողոքը քննող անձը իրականացնում է *վերահսկողություն պատվիրատուների կողմից հայտարարված պետական գնումների հրավերների օրինականության և հիմնավորվածության նկատմամբ*:

Վերոհիշյալ սկզբունքները հնարավոր է ապահովել բացառապես գնման գործընթացների հրավերների օրինականության և հիմնավորվածության նկատմամբ ֆինանսական վերահսկողություն իրականացնելու միջոցով:

Դեռևս ընթացքի մեջ գտնվող գնման ընթացակարգերի նկատմամբ գնումների հետ կապված բողոքը քննող անձի կողմից իրականացվող նախնական ֆինանսական վերահսկողությունն ուղղված է ֆինանսական խախտումների հայտնաբերմանը և կանխմանը²:

Ներկայացված բողոքների շրջանակներում պետական գնման ընթացակարգերի հրավերները գնահատելիս պետք է վերլուծվեն հրավերների հետևյալ ասպեկտները.

➤ *Հրավերով արդյոք նախատեսվել է պատվիրատուի կարիքին համապատասխան ապրանք կամ ծառայություն:*

Տվյալ դեպքում շատ կարևոր է բացահայտել՝ արդյոք գնման ընթացակարգի հրավերով նախատեսվել է այնպիսի ապրանք կամ ծառայություն, որը իրականում

¹ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մաս և 47-րդ հոդվածի 1-ին մաս:

² Տե՛ս **А. В. Румянцев**. Финансовый контроль (курс лекций). Москва, "Дело и Сервис", 2003, էջ 27-28:

համապատասխանում է պատվիրատուի կարիքներին: Բանն այն է, որ գործնականում պատվիրատուները հաճախ պահանջում են այնպիսի ապրանքներ կամ ծառայություններ, որոնք տվյալ պահին գերազանցում են իրենց իրական կարիքը, ինչը հանգեցնում է պետական միջոցների ոչ արդյունավետ օտագործման, անգամ վատման: Օրինակ, պահանջվում է չարդարացված բարձր տեխնիկական չափանիշներով համակարգչային տեխնիկա կամ ընթացիկ օգտագործման համար նախատեսված A4 ֆորմատի թուղթ: Կամ հակառակը. պատվիրատուն անհասկանալիորեն պահանջում է շրջանառությունից դուրս եկած կամ պատվիրատուի իրական կարիքից ակնհայտորեն ցածր պարամետրեր ունեցող ապրանք, որի ձեռքբերումը ոչնչով հիմնավորված չէ:

Այդ իսկ պատճառով գտնում ենք, որ գնումների հետ կապված բողոքը քննող անձը նման բողոքներ քննելիս նախ և առաջ պետք է պարզի, թե արդյոք ձեռք բերվող ապրանքը կամ ծառայությունը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

➤ *Գնման առարկայի բնութագրերը արդյո՞ք ամբողջությամբ և հստակ նկարագրել են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:*

Ներկայացված բողոքի շրջանակներում գնման ընթացակարգի հրավերը գնահատելիս անհրաժեշտ է բացահայտել գնման առարկայի բնութագրերը՝ արդյո՞ք ամբողջությամբ և հստակ նկարագրել են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, մասնավորապես ամբողջությամբ ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը: Բացի այդ, գնման առարկայի հատկանիշները պետք է հնարավորինս ներառեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա¹:

Օրինակ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը միջոցառումների ձեռքբերման նպատակով հայտարարած «ՍՊ-ԳՀԾԶԲ-19/13» ծածկագրով մրցույթի հրավերով² սահմանվել է հետևյալը. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմկոմիտեի և փորձագիտական հանձնաժողովի անդամները կայցելեն ՀՀայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթին հայտ ներկայացրած քաղաքներ, տեղերում կուսումնասիրեն և կիրականացնեն հայտերի գնահատումը: Քաղաքներ այցելության ժամանակացույցը կսահմանի ՀՀայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմկոմիտեն: Մատակարարող կազմակերպությունը կիրականացնի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմկոմիտեի և փորձագիտական հանձնաժողովի անդամների այցելությունները հայտատու քաղաքներ, նրանց սննդի և ըստ անհրաժեշտության կեցության ապահովումը»:

Այս պահանջի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ մասնակից կազմակերպությունների համար անհայտ է, թե «Հայաստանի Հանրապետության 2020

¹ Տե՛ս «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված:

² Տե՛ս՝ www.gnumner.am կայքի «Հրավերներ» բաժինը:

թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմկոմիտեի և փորձագիտական հանձնաժողովի անդամները որ քաղաքները պետք է այցելեն (հայտնի չեն թե՛ քանակը և թե՛ հեռավորությունը), և երբ է առաջանալու անհրաժեշտություն՝ ապահովելու հանձնաժողովի կեցությունը:

Մինչդեռ ծառայության հատկանիշների նման թերի նկարագրումը տարբեր մասնակիցների մոտ կարող է առաջացնել տարակերպ մեկնաբանություններ, և հնարավոր չի լինի ձևավորել հիմնավոր և ստույգ հաշվարկված գնային առաջարկ: Վերոհիշյալը, մեր կարծիքով, գնման առարկան թերի ամրագրելու օրինակ է և կարող է գնման ընթացակարգի հրավերի բողոքարկման հիմք դառնալ:

➤ *Արդյո՞ք հրավերում առկա չեն այնպիսի խտրական պահանջներ, որոնք կառաջացնեն մրցակցության սահմանափակում կամ հնարավոր մասնակիցների շրջանակի նվազում:*

Այս դեպքում գնումների հետ կապված բողոքը քննող անձը պետք է գնահատի՝ արդյո՞ք հրավերում առկա չեն այնպիսի պայմաններ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը, անհիմն բարդացնում հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին կամ հանգեցրել են գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացման: Պետք է բացահայտել, թե մրցույթի հրավերով մասնակիցների կարգավիճակի նկատմամբ արդյոք չեն դրվել չհիմնավորված ցանր պահանջներ (օրինակ՝ տեխնիկայի կամ մասնագետների առկայություն, չհիմնավորված մասնագիտական փորձ), որի հետևանքով պետական գնումների դաշտից դուրս են մնում բազմաթիվ մասնակիցներ:

Օրինակ, գնման ընթացակարգի հրավերով պահանջվում է այնպիսի ապրանք, որը ՀՀ է ներմուծում միայն մեկ ընկերություն (հնարավոր է նաև պատվիրատուի հովանավորյալը): Արդյունքում գնման ընթացակարգին մասնակցում է միայն մեկ ընկերություն, ուստի ավելորդ է խոսել մրցակցության մասին, և ապրանքի գինը արհեստականորեն բարձրանում է¹:

Կամ, օրինակ, պատվիրատուն հայտարարել է պատրաստի սննդի մատակարարման գնման ընթացակարգ, որի շրջանակներում մասնակիցը պետք է ներկայացնի այդ և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Եվ պատվիրատուն սահմանում է ոչ թե հենց պատրաստի սննդի, այլ հանկարծ՝ *հիվանդների համար դիետիկ սննդի մատակարարման պայմանագրեր*²:

Նման հրավերի պայմաններում, անխոս, մասնակցին ներկայացող պահանջը հակամրցակցային է և խտրական, առաջացնում է պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի նեղացում, չի խրախուսում մրցակցությունը, ինչպես նաև անհիմն կերպով բարդացնում է հնարավոր մասնակցությունը տվյալ մրցույթին:

Համապատասխան բողոքներ քննելիս գնումների հետ կապված բողոքը քննող անձը պետական գնման ընթացակարգի հրավերների նկատմամբ պետք է օժտված լինի արդյունավետ նախնական ֆինանսական վերահսկողություն իրականացնելու հնարավորությամբ, ինչը, անխոս, կնպաստի բյուջեի միջոցների արդյունավետ իրականացմանը:

Հաջորդ հիմնախնդիրը վերաբերում է պետական գնման ընթացակարգերի արդյունքում հաղթող մասնակից ձանաչելու վերաբերյալ պատվիրատուի ընդու-

¹ Տե՛ս՝ ՀՀ ՊՆ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/30» ծածկագրով բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդ (www.gnumner.am):

² Տե՛ս՝ «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ի կարիքների համար սննդի մատուցման ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԿՖԲԳՀ-ԲՄՇՁԲ-18/3» ծածկագրով բաց մրցույթի հրավեր (www.gnumner.am):

նած որոշման հիմնավորվածության և օրինականության նկատմամբ վերահսկողության ապահովմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) ու որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Այսինս, քննելով բողոքներ, որոնցով բողոք բերող անձը վիճարկում է պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները, գնումների հետ կապված բողոքներ քննող անձը փաստացիորեն իրականացնում է ընթացիկ ֆինանսական վերահսկողություն պետական գնումների ոլորտի նկատմամբ:

Բանն այն է, որ պետական գնման ընթացակարգերի արդյունքում հաճախ հաղթող մասնակից է ձանաչվում մի ընկերություն, որը չի համապատասխանում տվյալ գնման հրավերի պահանջներին, կամ անհիմն, օրենքի խախտմամբ մերժվում է նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ընկերության հայտը, որի հետևանքով պետական բյուջեն վնաս է կրում: Պետք է նշել, որ լինում են դեպքեր, երբ պատվիրատուն ցուցաբերում է երկակի մոտեցում. նույն հիմքերի առկայության պայմաններում մի դեպքում մերժում է մի մասնակցի հայտը, իսկ մյուս դեպքում՝ մեկ այլ մասնակցի հայտը գնահատում բավարար:

Բողոքներ քննելիս պետք է նկատի ունենալ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով հստակ պահանջվում է, որ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքարկվեն **նախքան պայմանագրի կնքումը**: Նույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետը պայմանագրի կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է: Իսկ 5-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագրի կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագրի կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագրի կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: **Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:**

Այդ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, **բացառությամբ պայմանագիրը անվավեր ձանաչելու մասին որոշման:**

Թվարկված իրավական նորմերի համադրումից բխում է հետևյալ իրավիճակը. այսպես, ընկերությունը վիճարկում է պատվիրատուի կողմից հաղթող մասնակից ձանաչելու վերաբերյալ ընդունված որոշման իրավաչափությունը, սակայն պատվիրատուն, խախտելով օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, պայմանագիրը հաղթող մասնակցի հետ կնքում է անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող հենց առաջին աշխատանքային օրը: Սակայն, ինչպես արդեն նշվել է, օրենքը արգելում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ընդունել որոշում պայմանագիրը անվավեր ձանաչելու մասին, թեկուզ և օրենքի խախտմամբ կնքված: Եվ անգամ եթե գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտնի, որ

ներկայացված բողոքը հիմնավոր է, և պատվիրատուի հաղթող մասնակից ճանաչելու որոշումը իրավաչափ չէ և հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, ապա գնումների հետ կապված բողոքներ քննող անձի համապատասխան որոշումը, ըստ էության, բողոքաբերին ոչ մի հնարավորություն չի ընձեռի՝ հավակնելու ճանաչվել հաղթող մասնակից, քանզի պատվիրատուն արդեն այլ մասնակցի հետ, թեկուզ և օրենքի խախտմամբ, կնքել է պայմանագիր, իսկ ինչպես նշել ենք, օրենքը արգելում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին անվավեր ճանաչել կքնված պայմանագիրը: Ուստի տվյալ դեպքում ստացվում է, որ ներկայացված բողոքը դառնում է առարկայագուրկ:

Նմանատիպ իրավիճակ է ստեղծվել, օրինակ, գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 06.04.2018թ. «Ազդ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի քննության ժամանակ, երբ Երևանի քաղաքապետարանը «ԵՔ-ԲՄՇՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթով հաղթող մասնակցի հետ պայմանագիրը կնքեց անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող ոչ թե առնվազն երկրորդ, այլ հենց առաջին աշխատանքային օրը, և փաստացիորեն գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բաց մրցույթը չկայացած հայտարարելու որոշումը չկատարվեց, քանզի առկա էր կնքված պայմանագիր, իսկ բողոքներ քննող անձը իրավագոր չէր անվավեր ճանաչել կքնված պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից կարելի է փաստել, որ ՀՀ-ում ներդրված է պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները արտադատական կարգով բողոքարկելու գործուն համակարգ, որը ընդհանուր առմամբ համապատասխանում է միջազգային համաձայնագրերով ներկայումս ՀՀ-ի ստանձած պարտավորություններին, համահունչ է միջազգային փորձին, սակայն, գտնում ենք, որ այն կարելի է ավելի արդյունավետ դարձնել՝ հաշվի առնելով սույն հոդվածում նշված խնդիրները և վերացնելով համապատասխան օրենսդրական բացերը:

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ОСУЩЕСТВЛЕНИЯ ФИНАНСОВОГО КОНТРОЛЯ В СФЕРЕ ГОСУДАРСТВЕННЫХ ЗАКУПОК ЛИЦОМ, РАССМАТРИВАЮЩИМ СВЯЗАННЫЕ С ЗАКУПКАМИ ЖАЛОБЫ

Асмик Енгоян

*Доцент кафедры конституционного права ЕГУ,
кандидат юридических наук*

Раффи Налчаджян

Аспирант Академии государственного управления РА

В данной статье представлены некоторые проблемы в осуществлении финансового контроля в сфере государственных закупок лицом, рассматривающим связанные с закупками жалобы. Целью законодательства, регулирующей сферу государственных закупок, является обеспечение в процессе закупок стоимости в счет оплаты. В статье предлагается применить ряд контрольно-надзорных методов для достижения этой цели, в частности со стороны лица, рассматривающего связанные с закупками жалобы:

1. При рассмотрении жалоб осуществлять надзор за законностью и обоснованностью объявленных приглашений для государственных закупок, составленных заказчиком (государственным или муниципальным органом),

2. При рассмотрении жалоб осуществлять надзор над законностью и обоснованностью решений заказчика о признании победителя в тендере для осуществления государственных закупок.

SOME PROBLEMS OF IMPLEMENTATION OF FINANCIAL CONTROL IN THE FIELD OF PUBLIC PROCUREMENT BY A PERSON EXAMINING PROCUREMENT-RELATED APPEALS

Hasmik Yengoyan

Associate professor at the YSU Chair of Constitutional Law

Raffi Nalchajyan

PhD Student of the Public Administration Academy of RA

This article presents some problems of implementation of financial control in the field of public procurement by a person examining procurement-related appeals. The purpose of legislation regulating government procurement sphere is to assure reimbursement of value in the procurement process. Therefore this article suggests implementing a number of supervisory control methods for the person examining procurement-related appeals, such as:

1. During the examining procurement-related appeals to supervise the legality and validity of the announced invitations by the customer for government procurement,

2. During the examining procurement-related appeals to supervise the legality and validity of customer's decision on a recognition of winner in tender of government procurement/

Բանալի բառեր - ֆինանսական իրավունք, ֆինանսական վերահսկողություն, պետական գնումներ, գնումների հետ կապված բողոքը քննող անձ

Ключевые слова: финансовое право, финансовый контроль, государственные закупки, лицо рассматривающее связанные с закупками жалобы

Key words: financial law, financial control, government procurement, public procurement, state purchase, the person examining procurement-related appeals